



ՀԱՆԳԻՍ

Հ. ԱՐՍԵՆԻ Կ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻՈՅ

ՆՈՐՈՑ ՔԵՐԴՈՂԱՀՕՐ

Սուրբ են օրէնք հանգուցելոց և անդրժեյի իրաւունք գերեզմանաց. մանաւանդ որ զայնպիսի ծածկեն այր՝ որոյ անմահութեան յերկրի կանխագոյն ծաւալեցաւ նսիհ, քան թէ մահուն շշուկ. և մինչդեռ հրահանգք պարկեշտութեան կրօնիցն զոր ընտրեաց 'ի կենցաղումն՝ սիրեն տակաւին զլուծիւն համբուրել, արդարակորով հայրենիք՝ որ 'ի համբաւոց առաքինի ծննդոցն բարգաւաճեն, ոչ զանգիտեն կալ անկոխ հակառակ՝ թաքնասէր կրօնից, պահանջել զմասն հոչակի հրաժարելոյն. 'ի քաջալերս ազգի՝ յորմէ բուսան, և 'ի հաւատս վերնախնամ տեսչութեան՝ եթէ ոչ իսպառ բարձի թողի առնէ զվաղ ուրեմն բազում մասամբք տըն. տեսեալն յիւրմէ տուն որդւոցս թորգոմայ, այլ և այսպիսեօք՝ և 'ի հեռաւոր դարս՝ հանճարափայլ արամբք՝ յայց ելանէ ժողովրդեան և լեզուի քաջ 'ի բաց նախնականի: Հատուցուք ուրեմն, թէպէտ և համառօտս, զհարկ զայս սեփականութեան տոհմիս՝ օրում պարտականս եմք յետ հոգեծին մօրս՝ եկեղեցւոյ. տացուք լուծեամբ՝ զԱստուծոյն Աստուծոյ,

և անօր ինչ ձայնիւ՝ զհայրենեացն առ հայրենիս . յորմէ ընկալեալ իսկ զսա յաւանդ և յորդեգիրս՝ Ուխտ Մխիթարայ, անոյց և զգուեաց 'ի սկըլբանէ դարուս, վաթսուն և վեց ամ . մետասանամենի ընկալեալ յանցաւոր դախարհէս և եօթանասունեօթնամենի աւանդեալ առ անանցականն :

Ի հնարուն և 'ի մեծապանծ տոհմէ շառաւեղեալ ըստ աւանդութեան և հայրանուն կոչմանն՝ 'ի Բագրատունեաց, զազնուաց և զվեհից ակն յանդիման բերէր նա յինքեան կերպարանս, և հարևանցի անգամ նկատողաց աչաց՝ երևեալ փառացի և ուշեղ . զլուխ ըստ նախնեաց փիլիսոփայից ունելով քաջ ճակատաւոր, աչս բանաստեղծականս եռանդնանկարս, և հայեցուած՝ (եթէ ներեսցի յանսրբոց 'ի սուրբս առնուլ նմանութիւն) որմզգական իմն և ամպրոպային, ահեղ և զուարթ, և ընդ հասակին յառաջատուութեան՝ ծաղկեալ պատկառելի արեօք՝ որ 'ի նահապետականն յանդէին փաղփեալ սպիտակութիւն . յարմարագոյն դիմացն ունելով և մարմին պնդակազմն և զուգապատշաճ . որպէս ճարտարակուս աշտարակ 'ի քաջադիտակ բարձրաւանդի . որոյ տեսիլ զնեղքին ամրութիւնն և զհաստատութիւն ինքնին յայտ առնիցէ : Եւ էր իսկ այս քաջածանօթ որոց ընկերակից եղեն նմա, կամ հանդիպեցանն կենակցութեամբ և տեսութեամբ, և որք միանգամ վայելցինն յարգասեաց հարուստ հանճարոյն և 'ի պրակաց գեղեցկագիր մատանցն . զորս մահ և եթ դադարեցոյց, այլ լուծանել և լքուցանել ոչ բաւեաց ցյետին աւուրս կենացն, ոչ զամրոստեան մատանցն՝ և ոչ զանվտիտ մտացն կորովս : Որպէս զի եթէ որ աստուատ յետս ընդգէմ՝ 'ի վերջին երկասիրութենէ գրչին ցառալին ծնունդս նորին ակն արկանիցէ, ոչ կարասցէ ոչ հիանալ ընդ համազօր և համակարգ յարահոսել հզօր հանճարոյն, և ընդ կուս և աննկուն բանակարգութիւնն . նշան և թարգման բազմազան և աղամանդեայ ամանոյ ուղղոյն : Ոչ իշխեսցէ բանասէր որ և հայրենասէր ժխտել թէ արդարև սա մի 'ի վեհագունից մտաւոր արանց երևելոց յազգիս Հայոց, և 'ի կարի քաջ յառաջադէմն հայկաբանից . մի 'ի սակաւուցն ընտրականաց, և գոգչիր յաննմանիցն և յանհաւասարելեաց : Որպէս զի, ըստ իս, եթէ դասակարգել զսա կամք իցեն 'ի շարս քաջալեզու ազգայնոց արանց հայկախօսից հայրենագիտաց, շար՝ ոչ միայն մեզ պանծալի այլ և ամենայն հրահանգեալ մտաց, հարկ իցէ թողուլ զկնի սորա և զյառաջեալսն քան զինքն առ մեզ տիօք և փորձիւ, զիւր իսկ վարժապետն զթովմաճան և զընտրագոյն ևս քերականն Աւետիքեան, և անցանել սրանալ զերեքտասան յորելինօք ամօք, և յ'ժի դար անդր 'ի վեր ելանել յաւուրս Ներսիսեանց և Գրիգորիսեանց : տի նա գուցէ և անդրագոյնս ևս համարձակել, և 'ի նոյն իսկ յոսկեղինիկն դար դպրութեանց մերոց միսիլ, 'ի ցանկալին յայն, և աւանդ, 'ի յոյժ համառօտեալ ժամանակ թարգմանչացն մերոց առաջնոց, 'ի վարժոցս Սահակայ և Մեսրոպայ և նոցին ձեռնասուն աշակերտաց : Այսպէս իմն ինձ թուի, եթէ 'ի պարգևել և յառաքել բարձրելոյն յերկիր և 'ի տաճար հայկական բախտի՝ զաւագ որեարն զայն հայակոյտ հանճարեղաց, զՄովսիսեանս և զԴաւթեանս, զԵղնակն և զԵղիշէն, նհանջեալ կալաւ թաքոյց 'ի դարանակալ խանութս շտեմարանաց արարչութեան իւրում՝ հոգի մի 'ի պայծառ և 'ի կայտառ հոգեաց անտի, 'ի դասընտիր անձանցն՝ որք և յանչլքանալ ազգիս ըստ քաղաքական հրահանգաց, տածեցին և տածեն տա-

կաւին զողի ազգութեան, աստուածախառն շնորհիւ հայերէն դպրութեանց . որով և 'ի հոյս ազանց՝ տրոփէ և արդ սիրտ Հայկազին . որով և սիրելագոյնն զիւցազանց, նախահայր նոցին՝ Հայկն՝ 'ի քառասուն և յեսուն դարուց խաւ 'ի խաւ հնութեանց արժարծեալ պայծառագոյնսն շողէ յողիս, քան համանունն իւր (Որինն) 'ի համաստեղութիւնս երկնից . մանաւանդ զի առ մեզ ուրեմն նորահրատ փայլատակեալ թափեցաւ ել 'ի խանդավառեալ մտաց և 'ի քերդողական գրչէ երգչին իւրոյ և մերոյս Հեղինակի:

Ի քաջանշան ժամանակի առաքեալ մտեալ յաշխարհ հոգիս այս քաջանշան՝ գուցէ և ել դարձաւ 'ի նշանական ինչ ժամանակի . ծնեալ 'ի սկիզբն նորոգման պատմական ժամանակաց ազանց՝ յամի ծագման բազմապեղոյն պլափոխութեանց աշխարհին փռանկաց՝ որ զամենայն Եւրոպէ՝ զսիրտն լրութեան երկրիս՝ կերպարանափոխ արարին, և 'ի տարուշս յայսմիկ 'ի միաւորութեան իտալիոյ՝ ուր եկեացն քան զ'40 ամ, վճարէր զկենցաղն . ձգեալ աւուրս ընդ արս հոյակապս՝ որք յեղանակեցին ըզդարս մեր 'ի զանազան աշխարհս . նոցին ինքն սա ճանաչող և դատող, իսկ եթէ առ 'ի նոցանէ, քաւ 'ի սակաւուց՝ անծանօթ մնացեալ, ոչ ինչ ստնանիցէ այս մեծութեան արժանեաց նորին և պարծանաց մերոց հայրենեաց . որում մի և այս յարկածիցն է՝ ըստ վայրավատին աստանդութեան որդուցն՝ թաքունս և անյայտս կամ անփառունակս նոցին մնալ: Չի եթէ այսպիւրոյ առն՝ էր ծնեալ և երևեալ յօտար ազգս, ոչ երկբայիմ հանդիպել նմա և հանդիսանալ ընդ նախադասս յակադեմեայցն պանծացելոց, և կամ ընդ ձեռներեց և մեծագործ մարդկան . այլ առաւել սիրեմ և խնդամ ընդ ոչ եղելութիւնն առ նոսին . քանզի համարեալ հաւանեալ ունիմ թէ աւելի քան առ նոսս՝ առ բազմաթիւքն և մեծազօրքն, առ մերս ազգ փոքր և նուազեալ՝ մեծագործեաց սա: Եւ ոչ 'ի սակի բաղդատութեան ասեմ զայս, այլ զլիովին և յարդիւնս . քանզի ուշի ուշով նկատեալ 'ի տաղանդս մտացն և 'ի հանճար՝ որով առաւելն փայլեաց, — զգեղեցիկ դպրութիւնս ասեմ, ըստ բանաստեղծական, քերդողական և քերականական հրահանգաց . — 'ի բարգաւաճանս հայերէն լեզուիս և յարձակն բան և 'ի չափական, և յանբաւ ճոխութիւնն՝ զոր յայն յաւել՝ որ ինքնագիր մատենիւք և որ զուգապատիւ նոցին թարգմանութեամբք յօտարացի դպրութեանց, ո՞վ ոք արդեօք դանդաղիցի և զսա ընդ հոչակագոյնս 'ի մատենագրաց յի՞ դարուս համադասել . կամ ո՞ ոք 'ի մեծանուն և 'ի պանծացեալ գրչաց անտի՝ որք ընդ սմա կեանս վարեցին՝ այնքան երախտագործ և օժանդակ դոտաւ առ հայրենի ազգին վարժեար, որպէս առ մերս հայերէն դպրութիւն՝ իմն Բագրատունի: Ուսումն լեզուաց՝ ոչ սակաւ հասարակեալ այժմ և 'ի մերում ազգիս՝ զիւրեսցէ մերայոցս զայս քննութիւն և համեմատութիւն, եթէ հաւասար օտարայն գիտիցեն 'ի պատուի ունել և զբնիկան, և ոչ առ անարգ ունիցին զընտանին մարգարէ . կամ թէ չիցեն դռնչեալ ականջօք յորտալոյ մեծամեծ փողոց համբաւուց ազանցն այնոցիկ՝ որք զօրաւիզն և նաւթճիչ գիտութեանց՝ ունին և զգօրութիւն և զհարստութիւն քաղաքական, և մեծափառ և՛ զինքնօրէն ազատութիւնն: Այլ ես հաւատամ, թէ 'ի յառաջել և ևս ժամանակաց և մտաց մերասերից, ծանիցի Սա՝ զորմէ բանս է, կամ

նոր պարագլուխ և հանդիսադիր քաջաց և ստոյգ հայկաբանից և թարգմանչաց, և կամ հրաշափառագոյն ևս մենութեամբ՝ անհուպ և անմատոյց մնացեալ 'ի հետևողացն, օրինակ իմն նկարագրեալն 'ի պատմագրէն մերմէ և յառաջին ֆերդողահօրէ՝ Այրարատեանն այն « լեռնն արեգակն աճեմ սպիտակափառ և ուղղորդ յերկրէ բուսեալ, . . . ծեր ոմն արգարև լեռնն 'ի մէջ երիտասարդացեալ լերանց »:

Ոչ վարկպարագի բառից և բայից հմուտ և հետամուտ ֆերդոյս մեր և ֆերդողահայրս նոր, այլ առաւել ևս Բանին սիրող և սքանչացող. և այս թէպէտ ըստ բազմազան զօրութեան հանճարոյն, և թէպէտ ըստ կարգի և պատշաճի նուիրական և աստուածանուէր կենացն: Եթէ բանաստեղծ ծնեալ, սակայն և իմաստասէր եղեալ. և ոչ լոկով ջանիւ, այլ բնաբոյս իմն բերմամբ. յամենայնի առ հաստատունն գիտութիւն և ըղձացեալ և ձգտեալ. և որքան ըստ քերդողական աշխուժիցն և ցնորից՝ յարածիւն և բարձրաճեմ, նոյն և 'ի քննութիւնս և 'ի խօսս խորամուխ և խնդրախոյզ մեծամեծաց և զարմանալի օրինաց բնութեան և դաղտնեաց. որպէս զի եթէ օրէն իցէ ասել, զլիսով եռանդեամբ օգապարիկ լինէր ընդ մուսայս, այլ ոտից հետս 'ի տրամական հաստատուն երկրի խնդրէր. իսկ թեզքն՝ ոչ ընդ օգս կոծէր 'ի զուր, այսինքն է ոչ բերիւր յանստոյգ գիտելիս. սարմնոյր 'ի կարծեաց և 'ի թուեաց. և ոչ մի ինչ փոքր և դուզ նաքեայ չէր նմա սիրելի, ոչ 'ի նիւթս և ոչ յիմաստս. վասն որոյ և ոչ միայն չառնոյր չունէր սնոտիս ինչ 'ի նիւթականաց և 'ի զբօսականաց, այլ և ոչ գիրս (որ յար քնթեռնոյրն և գրէր գիրս), թէ ոչ զհուշակեալն ընտրութեամբ: Վկայ ինձ իմաստասիրական ախորժակացն և հանճարոյն՝ թարգմանութիւնք գրոց բանական արուեստին Սոաւէի, որով նախ առաջին եմոյծ 'ի մեզ կշռադատեալ բառս փիլիսոփայական լեզուի, նկարագիրք բարուց թէնփրաստեայ, և ինքնահիւս մատենիկն Արուեստ ուղիղ խորհելոյ և խօսելոյ, Նա և եթէ քաջ միտ դիցուք՝ և այլքն ևս յերկասիրութեանց իւրոց և 'ի բնիկ արտադրութեանց՝ հիմնեալք են 'ի սոյն. երկղքին Հայ ֆերականութիւնք և միւսն մեծ քերականն զաղղիարէն լեզուի, յորում և զհայերէն քերդողութեան արուեստն աւանդէ համառօտ, զոր երկարագոյնս պատրաստէր յապայն հրատարակել. և ամենայն իսկ թարգմանութիւնքն՝ վկայ են նմին իմաստասէր մտաց, քաղեալք յընտրից և 'ի գերագոյն ծննդոց հանճարոյ փայլեցելոց առ հինս և նորս ազգաց:

Սակայն հարկ է խոստովանել զի քան զբնական և զարուեստի գիտութիւնս՝ վերադասէր, կամ ըղձակերտ լինէր առ գեղեցիկն մտաւոր և առ բանակարգութիւն վայելուչ, ըստ իւրոյ հայրենաստուր լեզուին. և հաւասար բաժանեաց և ծախեաց զկեանսն՝ գոգ վաթսուն ամ՝ յընթերցումն օրինակագիր հեղինակաց գրոց արտաքնոցն ճարտարաց առ 'ի հաւաքել 'ի լայնութեան փեթակի մտացն՝ նիւթս երփն երփն իմաստից և շնորհաց, և 'ի քննութիւն, 'ի կրթութիւն և 'ի հաւաքումն ոճոյ հայկական լեզուիս յատակութեան. յոր սակս ոչ միայն ընդ ամենայն առ մեզ հասեալն 'ի մերոց բնիկ նախնեաց էանց վերծանութեամբ և մանր քննութեամբք, այլ և մինչև ցյետին ամս և ամիսս՝ որ ինչ նոր գտանիւր ուրեք կամ՝ յոմանց բան և բառ, զամենայն անվրէպ առնոյր 'ի փորձ և 'ի քնին,

և 'ի վար ևս արկանէր 'ի բազմապատիկ գրածան և թարգմանածան . այլ և ոչ մի բառ կամ վանկ մինչև ընդ երկար փորձեալ և ստուգեալ : Եւ որպէս 'ի սեփականիս մերում լեզուի՝ նոյն և յօտարսն , զորս գիտաց քաջ նախամեծար առնել , խորամուխ և քաջահմուտ լինէր , և զիւրաքանչիւր զնոցին յատուկ ճաշակսն և զգայր և վայելէր , և տայր վայելել այլոց . գրեաթէ հաւասար հմուտ յոյն և լատին և իտալացի և փռանկ բարբառոց , յորոց յերկոսին նորա՝ խօսէր անսայթաք և ոճով 'ի զարմանս և 'ի գովութիւն բնիկ նոցին ազգայնոցն : Իսկ հասարակաց վկայ յայտոսիկ ներկուռ տեղեկութեանն և յիւրականին անհամեմատ հմտութեանն՝ եթող զբազմապատիկ թարգմանութիւնսն . որպիսիք , 'ի յունական լեզուէ՝ Հովներ , Ոլումպիական տաղք Պիկեդարուի (կորուսեալք) , ձառք Գեմնուքեևի և Եսքիկեայ 'ի Պաւկի , ընտիրք յողբերգութեանց փափկախօսն Սոփոկլի . 'ի լատինականէ՝ Մշակականք Վիրգիլեայ , Արոնեստ քերթոքեան Որստեայ , Ճառք Կիկերոնի ընտրանաւ , Պատմութիւն Յ . Կեւսարոս , յետին և թերակատար վաստակ գրչին . — 'ի փրանկաց լեզուէ՝ փոքր-Քառասունորդք Մասիոնի , Դաւիթական Ճառք Պոսիւեդայ , ընտիրք յողբերգութեանց Ռասինի և այլոց . — յիտալականէն՝ Ողբերգութիւնք ինչ Ալֆիերեայ , տաղք քնարերգակք , որպէս Գերեզմանք Փուկոլեայ , և այլն . այլ և յանգլիականէն , յոր լեզու չէր որպէս յայլսն հմտացեալ , համայն և այնպէս ոչ պակաս 'ի կատարեալ հմտից՝ ընծայեաց զչքնաղ թարգմանութիւն Միլտոնի Դրախտին Կորոնուելոյ : Ռորովք ոչ միայն լոկ ճաշակու , այլ որպէս բանիս կարգ է ասել խնջոյս խահամբս յարդարեաց մերայոցս , յօտարայն անտի յեղեալ 'ի հայ ըզքայցր քերդուածս և զվսեմ և զհզօր ճառս և խօսս . որովք և բնկին մերում հայկական բարբառոց՝ յաւել շնորհս նորանորս և չքնաղ պաճուճանս , գուցէ առաւելեալ քան զհին թարգմանիչսն՝ ձեռնարկութեամբն 'ի նոր լեզուս , որք ոչ ըստ հնոցն դիւրագոյնք գտանին փոխանցել 'ի մերս կամ յայլ հին լեզուս . այլ սա գիտաց քաջիկ տալ նորոցն զվսեմական կերպ հնութեան , մանաւանդ որ հրաշալին ևս է՝ զգեցուցանել հնոյս զառուգութիւն նորութեան , ոչ յանկարծաշարժ մեղեան մոգիչ մատամբք , այլ քառասնամեայ երկարատուկ քրտամբք և տքնութեամբք : Քանզի և յամենայն երկասիրութիւնսն և յինքնագիր և 'ի թարգմանածոյ՝ զայս ուշ նպատակի ունէր մեծաւ և յամառեալ իմն պնդութեամբ , յատակել ազնուացուցանել , 'ի նախնին և յընտիր տարալ և 'ի ձև մոծանել զհայերէն խօսս և 'ի տաղականն և 'ի հետեակն բան . յոր ոչ սակաւ սատար ընծայեցին ինքնաստեղծ մատեանքն՝ ուրոյն 'ի մուսուր արգասեաց իւրեանց , երեքին մանաւանդ , Տաղքն , մեծ Քերականոքիւնն վարդապետոց և Հայկն , զորս և 'ի զէպ է իսկատիպ գործս և գլուխս գործոց անուանել իսկատիպ առնս և հեղինակիս . և որոց մէն՝ միոյ առն թերևս շատ էր յանմահ անուն , այլ անբաւական առ մերս Բագրատունի :

Անկէքելի քան զհասակն կորով խելացն և կայծք հանճարոյն , վաստակ և տուկ անդու՛ հաւասարք իմն խաղային և յորդէին 'ի նմա՝ որպէս 'ի մշտաբուղի աղբերէ զամս վաթսուն . և ծայրացեալն իսկ ծերութիւն մերձ ութսնամենի՝ չածէր ինչ ստուերածս իմաստնաճեմ մտացն և շարժվարժենի մատանցն , ընդ որոց կորզան անջանէին տակաւին սո .

վերջ սովետտիցն Աթենայ, մինչդեռ 'ի հեռուստ յանտեսից կարթել զնոսին կարկառէր կարկամեալ դաստալն մահու. և 'ի յետնումն ամի կենացն տապանազիրք տողեալք 'ի սրտառուչ յիշատակ իւրոց ձեռնա. սուն սանուցն և վաղավաղճան խայրեաց ազնիւ տոհմին Տիւզեան, դոզ զառաջին երիտասարդութեանն աշխոյժս և փափկութիւնս բանից. և ըզ. դացուածոց յանդիման կացուցանեն: — Այլքան հեղզ և դիւրաբեկ է հողապատեանս մեր գոյակ, անհաւատարիմ ընկեր մտաց և սրտի, որք 'ի բազումս բազում անգամ ցվախճան կենաց և չնչոյ՝ զմանկական առու. գութեանն և զեռանդեան պահեն չնորհս, յառհաւատչեայ տիրատիպ ան. մահութեանն իւրեանց: — Զոր և մեր 'ի սմա տեսեալ և օժանդակ նմին զպնդակազմութիւն խառնուածոցն և զչափաւորութիւն սակաւապէտ կե. նացն, յուսայաք յերկարել և յարանալ նմա 'ի գեղեցիկ վաստակսն. յոր ոչ միայն 'ի ցանկալի առանձնութեան խաղաղաբնակ մենաստանիս պարապէր, այլ և անդ ուրեմն 'ի բազմազբաղն 'ի բազմածուփն քան ըզ. ծով՝ 'ի Բարելոնի արևելեան աշխարհաց, որ զյոզունց՝ գիտէ գեղեկել զգլուխս և զառածեցուցանել յօտարոտիս: Այլ սորա և անդանօր զբա. ղանք, քանզի և եկեաց իսկ անդէն ոչ պակաս քան զբառորդ մի դարուս, կամ յօրինուած և յերկւրած ըստ մասնէ վերոյիշեալս դրոց, և այլոց ևս՝ զորս համաճարակ պատուհաս քաղաքին այնորիկ՝ հրդեհն ամենա. կուլ՝ բնաջինջ լափեաց և աճիւնացոյց, զերկունս արուորագոյն տիոց նո. ըին. — կամ դաստիարակութիւն Պայազատաց անգնուաչուք գերդաստա. նին, և կամ քահանայական աստիճանին սեփական և վայելուչ տնտե. սութիւնք, քարոզութեամբ և այցելութեամբ հոգւոց. յորս մանաւանդ թեակոխէր առ երկդումբք եպիսկոպոսապետօք կաթուղիկեայ բաժնիս Հայոց. ուր և հրաւիրեալ երբեմն կալ զլուս ըստ քաղաքական հրահանգաց՝ Ազգապետութեան անուամբ, կամ երեսփոխան 'ի դուռն արքունի, բացէ 'ի բաց հրաժարեաց. շատ վարկուցեալ զիւր զվաղնյուց յօգուտ ազգին յերկար և դժուարին ձմեռնատանջ ուղևորութիւնն մինչև 'ի սառնապատ գահանիստն ինքնակալին Հիւսիսոյ: — Եւ յորժամ յետ այնորիկ հարկքն ինչ բռնադատեցին զնա ամփոփել զանձն և յեկեղեցական իրաց գործ. առնութեանց, այնուհետև առտնին և լուելեայն պարապէր աննախանձ մշտամանուկ մուսայիցն և հայկականն Տրի, և անդ յափունս աշխարհամուտ վոսփորոնի, և ասա 'ի զանխուլ կարակունմն կղզեկի հանդարտեալ Հան. դրին գոգոյս. ուր կրկին դարձ յարևելից արարեալ զեթանասնամենիւք ուրեմն, անդլակի ևս և յարաջան հանապազորդէր 'ի սիրային թերթան. մերթ զընտիր ընտիրս 'ի գործոց մերոց դասընտիր նախնեաց կշուութք և զտութեամբ գրչագիր մատենից՝ 'ի կնքագիր մամուլս ընծայելով, (յորս գէթ 'ի հարևանցի արժան է զամ՝ մի յիշատակել զմատենից մատեանն զԱ. տուածաչունչն, զոր բազում զգուշեալ և քննութք և յստակ և պայծառ որակաւ տպագրեաց) . և մերթ 'ի ծաղկաբաղս ելլենիկ և այլազգի հանճա. րոյ՝ հայերէն դարձուածով: Վասն որոյ և յանկազոյն իւրոյ նախնոյն և առաջ. նոյս մերոյ ֆերդողահօր կարէր ասել զանձնէ, թէ «Ես այր եմ ծերացեալ և անպարապ 'ի թարգմանութեանց» . 'ի բաց թողլով, գէթ ըստ մերոյ տե. սութեանս, զհիշանդոտն ևս ձայն. զի ոչ միայն հետս ախտից ըստ յա. ուաջատութեան տիոցն ոչ նշմարէաք 'ի նմա, այլ թուէր իմն եթէ յարա.

կիրթ դեղերանքն 'ի մտաբաց և 'ի մշտադալար դպրութիւնս՝ թէ ոչ յետս ընդդէմ՝ զհասակն յերիտասարդութիւն վարէին, գոնեա յաստոյ՝ անդր առկայեալ ունէին: Եւ էր մեզ ակն ընդ խորենեան քերդողահօրն տեսանել և զսա 'ի խորագոյն ալևոյթս, որպէս ոսկէփունջ հասկ ցորենոյ բարձրացեալ ատորացեալ 'ի հոյլս հնձոց ճարտար և հատու գրչին իւրոյ . ական ունէին և բազում վայելողք բազմապատիկ վաստակոցն՝ առաւելագունից ևս վայելից . ական ունէին և նորախայծ հանճարք համբակաց՝ 'ի լուսոյ և 'ի հրոյ հոգոյ նորին առնուլ նշոյլս և եռանդն նոր . 'ի զուարթութենէ շրթանցն՝ յորդորս և խրախոյս, և 'ի հարուստ ամբարոց մտացն՝ քաղել նորանոր պարէնս և փշրանս գիտութեան լեզուիս և դպրութեանց: Եւ ախտըն իսկ մահաբեր՝ նովին իսկ յանկարծահաս երեւմամբն, և անկորուստ զգաստութիւն անձինն, և մեծահաւատ փափագանօք ընդունելն զսուրբ խորհուրդս, զթոյակն անդարձական ճանապարհին և զօծութիւնն հոգեմրցիկ հանդիսին, և զյետ այնոցիկ 'ի վերայ եկեալ կազուրուսն, և անդրէն թօթափելն զմահիճս և յառնել և նստել և յայց դրակցացն եղբարց ելանել, և խօսել և հարցանել ըստ սովորութեան զսովորեալն, այս ամենայն ոչ միայն տենչալի՝ այլ և յոյժ հաւատալի երեցուցանէին զվերջոսնել մահուն . մինչ նա դեռ թաքուցեալ ընդ վարագուրաւ յուսոյ մերոյ՝ մենքենայէր զիւր զխաբէական հնարան, առ յանկարծուց 'ի վերայ հասանել անձողարելի որսոյն, միանգամայն յափշուրթիւն և 'ի սուգ կրթեալ զսիրելիսն և զհոգեկիցս: . . .

Այլ ոչ նա ինչ, ժմերտն այն կարծեցեալ օրհաս, այլ դու ինքնին որ կենաց ես կամեցող և հանգուցիչ յերկարելոց 'ի վերայ երկրի, որ և յամենայն հետս մահահոտս սիրես կենդանագրել զիծս անմահութեան, որ և ստէպ քո հոգեխրախոյս տնօրէնութեանցդ յիշատակօք այց առնես և զօրացուցանես զհոգիս հաւատացելոց քոց . որ ուսուցանես զկեանս համբուն աշխարհիս՝ մահ գոլ, և զվախճան կենացն ծնունդ յանվախճան կեանս . դու և աստանօր 'ի լուսաբեր երեկոյի տարեկանաց քո հրաշափառ ծննդեանդ՝ ճեպեցեր զսորայս՝ զոր սգամբն՝ զծնունդ անմահից կենաց . և հազիւ իմն ճոնչեցուցեալ զդուռն մահու՝ զբախելն զբանալն և զփակելն մի արարեալ, առեալ տարար 'ի մէնջ զմեծն զայն մեր եղբայր և հայր, զմեծն հոգի՝ յոր թիւք աստուածայնոց քոց զօրութեանց ընդարձակագոյնս կերպաւորէին . և 'ի վերանալն յանկարծուց՝ խորագոյնս նշմարեմք զմնացեալս 'ի միջի մերում պարապ, զմեծութիւն և զգին 'ի բաց առեւոյն առ 'ի մէնջ: Եւ զի առ 'ի քէն ել հրամանն, Տէր ոգեսէր, քեզ երկիր պազանեմք ափ 'ի բերան . որ ոչ այնքան երբէք թուիս մեծ երեւել խոնարհութեամբդ 'ի մահացուացս միջի՝ որբան 'ի բառնալն յերկրէ զմեծամեծս մարդկան, զարս զօրութեանց, զկորովի և ըզպանծալի հանճարս . և 'ի հիացմանս մերում՝ առաւել քան յունայնացեալն յայն 'ի շնչոյ կենաց՝ յառեալ հայիմք 'ի բարձողդ շնչոյն հեզիկս սլացելոյ: Եւ դու, Տէր, դու կաս 'ի միջի մերում, և ոչ անհաղորդ մերոցս կրից, որ ինքնին գիտես զինչ կրի 'ի մարդումս . և յիշեալ գքո երբեմն մտերմութիւն ընդ մարդկան մահացուաց և զաղապատանս հարազատաց, արտասուել իսկ ոչ սպուժես . համայն և այնպէս չարձակես աստանօր զքաղցրաբարբառ հողմն շնչոյդ, զորոյ ոչ գիտեմք զօրէնս գալոյն և երթալոյ, առ

ի սաստել բարապանաց ստուերաքնակ տնկանն՝ ՚ի բաց առնուլ զվէմն վհատեցուցիչ . այլ և խիզախեալ ցրտին հարկին՝ ջնուլոյ յաստուածային շնչոյդ՝ երթայ կափուցանել և կնքել անստնանելի կնքովն՝ զդուրս յետին մտիցն

Արդ եկ, խոնարհեաց խաղաղեաց ՚ի խորս համատարած գրկաց յաւիտենականն հանգստեան, և դու գգուելիդ մեր դուլս . Գլուխ բարձր և լայն, հայր մեր և եղբայր Արսէնիէ . որ յաստուածապարզ և բաստից բնուածեան ընկալեալ ձիր չքնաղ զբազմածին բազմազեղ գանձս մտաց, և մասն Մեծ կոչելոյ յաշխարհէ, անտասին ՚ի մանուկ տիոց նուիրեցար ՚ի թիւս փոքունց քրիստոսեան հօտին, և մինչև ՚ի վախճան ՚ի նմին ժուժկալեալ կրօնաւորութեան՝ զմեծն մարտեար մարտ, մեծագունին ակն եղեալ յաղթանակի, անձին ուրացութեամբ անձին յաղթել և յինքեան թագաւորել . որով և զահեղ հոսանս ամեհամուղ հանճարոյդ՝ սանձակօժեալ աղու և փոքու լծական Յիսուսի, դաստիարակեցեր ընդ ցածուցեալ արահետս իմաստից, ընդ նրբին շաւիղս գեղայնոյն և աղնուի, և յագուգայս ողորկ և ներկուռ բանի . թափեալ ՚ի քրայս հնապանձին և քոյինանորոզ արամեան բարբառոյ . ուլ նահապետդ և Նեստոր մերոյ դարուս ժամանակի հայկական խօսից և դպրութեանց, և փերդողահայր մեզ երկրորդ, ոչ ինչ կրսեր և անգոյգ յընտրութիւնս քերից հայրենականաց բայից, և ՚ի տարփատենչ հետևողութիւն ելլենականաց գեղածաղիկ ախորժակաց և հնարից . մրցողդ սիսակեան բամբռամբք ընդ պինդարեան և որատեան քնարաց, հայացուցիչդ Հովբրի, և հիացուցիչ հակողին Աւպիննի . քաջուշիմդ քաղցրահաւաք մեղուաց, ՚ի զանազան մարգաց դըպրութեանց ազանց՝ զանուշագոյնս և զառողգագոյնս ճաշակաց փոխարեւրել ՚ի հայկական դահամունս մտաց . — որովք ակաղձեալ իբրու բլիջարածին խանգը և բողբոջազարդ բոլորիւք՝ կառուցեալ կայիր ՚ի գերողիմպեան կատար մերոյս Մասեաց, ծառ ամբարձուղէ և հինաւուրց, յաղթ և կուռ հասակաւ՝ հանուրց գերազանցեալ և հովանաւորեալ շուրջակայից հայկաստեղն տնկոց . — զոր եթէ աստ ուրեմն անհաչտ վրիժակն այն կենախուզ՝ որպէս մայր մի հաստարմատ և թաւոստեան ՚ի կատարաց լեռանց բարձանց ՚ի սնարիցն Սանիրայ՝ տապարատաշ քշտելով և գետնաքարշ թաւաւմամբ՝ փլոյզ եբեր իջոյց ՚ի վհաքատակ խորս տապանիս, մի և մի բնաւ անչբիս . այլ կան մնան անդարչ ՚ի դիրս դադարման ամենայն հողարոյս հաստուածոյ . ուր չոր և դալար զմի օրինակ կոճոպեալ կաշկանդին . ուր ընդ զոպայից հեզոց՝ հարթ հաւասար ցածնուն և վարսադիտակնք ամպաճեմք, ընդ միով վերապահեալք յուսով՝ միւսանգամն ընձիւղման յանթարչամ դալարութիւն, յազդման մանուածալ գեռմանց կենսացընցուղ կողից նորոգողին հանուրց աշխարհաց :

ի սոյն արդ յայս նախապարզ և շիթս աստուածեանն օշարակի, — որ առաւել քան զքաղցրացեալն յառաջնաճաշակ քիմս քոյ և զանմոռաց առ ՚ի քէն հիւլթս թրակեան դայեկիդ¹, գիտէ սնուցանել յանծորելի կեանս, և քան զլոյմբիականն Ամբրոսիա պաշտի յերամս հոգեաց ճմաւ .

¹ Զամն երես ասէ իսկ ինքն յիւրաքիբ վարս իւրում անեալ կաթամբ յոյն ստնտուի, « և այս թերևս իցէ, ասէ, նիւթական պատճառ հեղինասիրութեան նորա մինչև ՚ի սպառ » :

րիտն Ելիւսեայ, — խառնեալ և զկակծաբեր տարախս մերոց արտասուաց,
ողջոյն յամբ խոնարհ խշտեկիդ որ զայդքանոյ մեծիդ ոգւոյ ծածկէ առ ՚ի
մէնջ վսեմական և տարփալի երևոյթ՝ ՚ի մոմայատակ հեղեալ մոյնս մա-
հու. և ոչ ՚ի կուճ և ՚ի խիճ կտտեալ քեզ այդանօր շիրիմ և սափոր. ոչ
անդրիս և քանդակս պատկերացուցիչս արժանաւորաց քոյոց վաստակոց.
ոչ արձան յիշատակի ըստ ախորժելեաց քոց սիւրբայից յերկրեալ ՚ի
բան չափական կամ արձակ ընթացիկ. ոչ մի քեզ պսակ պառնասեան
կամ շիւղ յոստոց իսթմենից, և սաղարթ վտարանդի ՚ի սիրելեացն քոց
ծիածածան Կիւլլաղայց. ճն, և ոչ սրբազանեալն ՚ի սաղմոսաց՝ վարսա-
կոծն երկրամածն հողահամբոյրն ջրասուզակն ուռենի վարանական, նշա-
նակ նժդեհնութեան և անդարձական տարագնացութեան, զորոյ երերա-
գին ճապուկ ժղեաց կախէաք արդեօք դքս զհրաշարուեստ տաղասացիկ
և հայկանուագդ բամբիւռն, սքոյեալ քոյինակրօն սեւասարաս և սրբազա-
նեալ զլխաշուքդ փակեղամբ, ՚ի խանձ և ՚ի մորմոք համայնից ՚ի քեզ սըր-
տացելոց և սխրացելոց. կալ յերևանի, — որպէս բարձրաձաղկ մի ոստ ՚ի
համապարփակ կուտակութեան ջուրցն այեաց՝ ՚ի կուռանս ոտից ընդվայ-
րայած կամ մոլորահետ հաւու, — ՚ի հաճոյական դադարս և ՚ի խոհս մու-
սայասէր մտաց, և հոգեկան տընողաց ՚ի խորհուրդս հանդերձելոց : Ոչ
մի յայսցանէ առ ՚ի մէնջ՝ քեզ, որ շատ իսկ նշմարես յաներևոյթս աս-
տէն առ ոստ տապանիդ՝ պատկեր անպատիր՝ զմերս գութ և գորով հա-
րազատ և արգադիր. յաջմէդ կարկառեալ զյուշ և զպարծանս հայրե-
նեաց, և յահեկէ զգարմանս և զվկայութիւն օտարաց սքանչացելոց . իսկ
՚ի սնարից կուսէ՝ զհրաշալին հանուրց իմացուածոց յերկրի՝ զկուսամայր
Հաւատս՝ սլացական սիրոյն բոցով ՚ի սիւն սրտին, և խարսխաձև խաչիւն
յանութ, երկդրուք զթալիր գրկօք շաղապատեալ զգլխովդ. որ թօթա-
փեալ աւաղիկ զամենայն, և զմուսայից և զմեր և զառհասարակ մահա-
հոտ հեթեթանս՝ ելեր խոյացար խառնեցար ՚ի բուն տարփելիս և խընդ-
րելիս խորազնին հոգւոյդ, ՚ի հրապարակ իսկից և էից՝ զորոց աստէն հա-
զիւ եթէ զուրուականս նշմարեմք առ աչօք ինչ պատկերս. և որպէս չը-
ղարշ մի մանչեալ կամ վերարկու միաճարմանդ՝ յանկարծոյն յական թօ-
թափել հորոնեալ զամենայն երկրախառն իմացուածս, զհնարս և զցնորս
բանաստեղծից մտաց, յաղբիւրն յարեն յակնն իսկաբուխ և համապայ-
ծառ լուսոյն պշուցեալ լինիս վակժոյժ ակնկառոյց, արծուիդ սուրակն
յերկրի, գերազօր սրակնացեալ արդ այժմիկ ազատական և անարգել
համաշրջիկ հոգւոյդ աչօք և թեզք : Արդ ճն անդր ՚ի բաց առ ՚ի քէն ամե-
նայն մարմնաւոր և մտացածին. թող թօթափեսցին և դափնիք Ապոլոնի,
խամրեսցի և նեխուրն նիմէական, նուազեսցին և հեզանազ նուիրակու-
թիւնք մտավարժիցն կամենայց, տարագրեսցին ամենայն ատտիկեցի և
եսպերացի թելադրութիւնք. և մէն դու միայնակ ստոյգ իսկուրհէ, Դըշ-
խոյ յաշխարհիս յայսմիկ՝ Հաւատք, — որ առ ՚ի գութ կուսածին ծննդոցդ
տեւեալ բաւեալ աննիազ՝ սպառեսցիս ՚ի հուսկն երեկոյի երկրիս, և յայգս
այդուն աներեկն աւուր՝ յաւետարանել հոլաթեւեան հաւուն գերապանծի
զանմահութեանն արևագալս՝ յեղեալ փոխեսցիս միացիս ՚ի թազաւորն
երկնից՝ ՚ի Սէր. դու միայն ստոյգ և զգաստ և սփոփականագոյն իսկուր-
հէ. դու լցցես զներքին և զարտաքին տխրորակ տապանիս. ակն և մատն

անխոտոր 'ի հետոց հրաժարելոյս առ 'ի մէնջ հոգւոյ՝ ուղղեալ հասուացես զդա յանբթիթն իւր նպատակ, 'ի լոյսն, 'ի սէրն, 'ի ճշմարտութիւնն, 'ի Բանն բուն, յԱստուածն յաւիտեանական...

Իսկ զի՞նչ քեզ արդեօք, հոգի հզօր և հեղացեալ, զի՞նչ և 'ի ճայրոտեալ գրչէս և 'ի վերջացեալ վանկիցս, նա մանաւանդ 'ի տրորեալ սրտէ աստի, որ ընդ առաջինսն քան զյոյրվս 'ի քոց ծանօթից՝ առընկալեալ պահէր զմեժ քո յարգ և զսէր յանդորրու խորութեան իւրում, քան 'ի յեղեղով 'ի վերին երեսս. զի՞նչ 'ի մատանց աստի տատանելոց և 'ի շըրթանց շրտուցելոց յանբանասէր երկրէ, և 'ի համր և 'ի յամառոտ մտաց. զի՞նչ քեզ առ յինէն ողջոյն վերջին և բան դամբանի, քան թէ զայն ամենայն բան զսպեալ 'ի նոյն 'ի սրտին թաքնարանի, զմին զայն միայն նուազել միանգամ ևս և միւս անգամ և բազում անգամ, զյոյժ հաճելին քո և զիմ զերգն այն երգոց՝ աստուածագոյցիկ մերոց հոգեբազուաց, զոր զոյգք երբեմն 'ի միում կալով եղեր աշխարհածովուս՝ նուազէպք. իսկ այժմ, եհէ, այն ինչ փոքու իւրք անշատեալք ժամանակաւ, խտրոց քանի մեծավիհ, 'ի միջի անլրպետ տարածանի. դու յարեգոյնն պրծեալ անթաց և անզանգէտ ոտիւք՝ կաս յափն կարմրակոյտ կոհակացն, ընդ թըմբկուհեացն և տեսանողացն պարու, զազատութեանն հարկանելով մասն. ես տակաւին յեզիպտականս պանդխտութեան՝ վարագուրեալ կտակարանաւ 'ի գրկի, գայթ 'ի գայթի դեղեկեմ՝ յերեկորնեայ փոռուքս. — նուազեցից սակայն զերգն զայն միջասահման երկրի և երկնի, քեզ յանդորր և 'ի հեշտ, ինձ 'ի յոյս և 'ի խրախոյս. « Հաւատ ունելով, հոգի խաղաղութե, » երթ առ Արարիչն՝ հայցելով Աճ իմ հանգո՞ւ... Երթ եղբայրակիցդ իմ, երթ աներկիւղ և համարձակ. զի ոչ միայն դատաստան ահեղ այլ և զթուրթիւն հոգեսէր ունի զճանապարհդ. նեղ և անձուկ է և այդ փողոց, այլ նոյն՝ որ հանէ 'ի դուռն անմահից կենաց. « Աստուած իմ, հանգո՞ւ » : « Որ ետուր հոգի՞ Թիսուս, զսա պահեա... Թագաւոր երկնաւոր, հանգո՞ւ զհոգի սորա, յիշելով սորա զհաւատս » : Պահեա պահեա զսա, Թիսուս, զի 'ի քեզ պարուրեալ ամիտփեցաւ, որպէս հատ մի ցորենոյ անկեալ 'ի գոգ հայրական ազարակիդ. հանգո՞ւ հանգո՞ւ, Թիսուս, զբարգաւաճն զայն հոգի՞ որ յերկրաւոր աշխատութենէն դառնայ առ քեզ. և եթէ բիծք ինչ արատեցին ուրեք երբեք զառ 'ի նմայն տպաւորեալ զյատակութիւն պատկերիդ, ըստ անհրաժեշտ, աւանդ, կարեաց գայթոտ և վեհերոտ բնութեանս, ըստ դիւրաստղապ սխալանաց հողեղէն զանգուածոյս, և ըստ զաղփաղփուն մտացս յածման, յորոց յոյժ սակաւուց 'ի մարդկանէ շնորհես անսայթաք և անսպի ճողոպրել, և չիք մարմին լուսաւոր յերկրի՞ որոյ չիցէ և ստուեր մթարկու, ոչ հուր՝ որ ոչ ծնանիցի և մոխիր խափուցիչ, և ոչ հզօր՝ որ ոչ հզօրագոյնս պահանջիցի, թող թող, Թիսուս, զարածն և զբիծ յարձակեալ 'ի հոգի՞ որ « ֆո խաչի և յարութեանդ հաւատաց » : — Լուս լուս հեշտարուր Թիսուս, զաղտն անբնական՝ քո ամենաքաւիչ արեամբդ, զոր պատարագաւ առ 'ի մէնջ քեզ և քե մատուցանելք վասն դորա. — սրբեա սրբեա՝ ամենայն սրտի սէրդ Թիսուս, քո անյիշատար ներողութեամբդ պամենայն որ 'ի նմա թերի երևեալ անաչառն արդարութեան. — հան հան ամենափրկիչդ Թիսուս, զհոգի սորա

'ի քրայիցն քառութեանց՝ ուր զյետինն պահանջին արարակիտ՝ առ պարզ-
երես յանդիմանութիւն քանքարատուր Տեառնն իւրոյ, և մոյժ յօթեանսն
քո բազմապատիկս, 'ի պատրաստեալն 'ի սկզբանէ յաւիտենից. — փու-
թա՛ փութա՛ անանջրպետդ 'ի սիրողացն քոց և 'ի հաւատացելոց՝ ամենա-
հասոյ Յիսուս, և ժամանեցո 'ի բարձունս՝ 'ի քեզ և 'ի Հայր քո և 'ի
Հոգիդ Սուրբ՝ զհոգիս զայս, որ ընտրեաց յերկրի քոյինակոխ անձուկ ճա-
նապարհաւդ հետեւել քեզ 'ի յերկինս : . . . Ե՛լ սլացիր վերացիր հոգի սրբա-
մաքուր, լից զյաւիտենից կարօտ քո 'ի ծոց անվրդովն խաղաղութեան,
մուտ յուրախութիւն և յարքայութիւն հասալին քոյ . » Ի քաղաք Տեառն
» զօրութեանց և 'ի քաղաք թագաւորին մեծի՝ ուր ժողովք սրբոցն են 'ի
» խաղաղութեան, գնասցես յուսով, և հանգիցես ընդ հրեշտակաց դասս,
» տեսանել զլոյսն յաւիտենից » : Ելեալ երթիցես 'ի քաղաքն յաւիտե-
նական, 'ի բազմականս արքայի մշտնջենաւորի, ո՛վ սպիտակացեալդ ա-
րեամբ արքայօրդոյն՝ զօր և զենուիրդ երբեմն քահանայօրէն 'ի վերայ
երկրի. արկցես այդրէն գբ և զօրէնս անկապտելի զարդուդ, խոյրաբարձ
վակասակիր քան զՍհարոն, պճղնազգեստ քան զՄեքիսեդեկ, կարմրորակ
որպէս փեսայ ելեալ յառազատէ, և շուշանափայլ քան զհարսն 'ի կու-
սածադիկ սրսկապանաց . և թէ ախորժեա՛ երթեալ կացցես և անդ 'ի վեր-
նայարկս ապարանից սրովբէասպասն Սիովնի՛ երաժիշտ մշտերգու . քնար
'ի նորաստեղն 'ի հրաշարժ 'ի համբուրելի մանրակտիտ մատունդդ ա-
ռեալ զգասապետին իսրայելի և զըստ մարմնոյ նախահաւուն քո Դաւթի .
կամ թէ՛ զնոյն ինքն գբերովբիմայ սաւառնաձայն սիրատարափ աղիս . և
երգեսցես զիսկազբանչն զգեղեցիկ և զազնիւ, յոր այնքան ընդ աղօտ նշմա-
րելով զմայլելիւրդ աստէն ընդ արեգակամբս . երգեսցես զնոյն ինքն զանըս-
կիզբն և զանվախճանն զՍէր, անզրաւական յաւիտենականութեանն չա-
փով : . . . Եւ յորժամ, յետ սակաւու միոյ երբի, հասցէ և հոգւոյս այսմ
ոգողի՛ երթալ գբո ճանապարհ, որպէս դուդ զնախայլոց, ժամանակես-
ցիս նմին ընդ առաջ՝ քոյովդ այդու աստուածապարակ քնարաւ, հրա-
ւիրել՝ ուր սայս այժմիկ գբեզ յուղարկել թեակոխեալ թոթովէ :

Այլ քան

